16, հունվարի 2023թ.
ք. Երևան

Երևանի քաղաքապետ
պրն. Հ. Սարգսյանին

Հանրային հավաքի անցկացման մասին իրազեկում

Հիմք ընդունելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը, հավաքն անցկացնելուն ուղղված գործողություններ ձեռնարկելուց առաջ, տեղեկացնում եմ, որ 2023 թվականի հունվարի 28-ին ժամը 12:00-ից մեր նախաձեռնությամբ անցկացվելու է հանրային հավաք:

1. Հանրային հավաքը նախատեսվում է անցկացնել Երևան քաղաքի Հանրապետության հրապարակում,
2. Հավաքը նախատեսվում է մեկնարկել 2023 թվականի հունվարի 28-ին ժամը 12:00-ից և ավարտել 2023 թվականի հունվարի 28-ին մոտավոր ժամը 15:00-ին,
3. Հավաքի նպատակն է տոնել Բանակի օրը, զորակցություն հայտնել Հայաստանի Հանրապետության Զինված ուժերին, արժևորել Հայկական բանակի 31-ամյա փառավոր ուղին և պահանջել Հայկական բանակը պարտության տարած, Բանակը վարկաբեկող և նսեմացնող գործող իշխանությունների հեռացումը իշխանությունից,
4. Հավաքին նախատեսվում է մոտավորապես 5"000 մարդու մասնակցություն: Մասնակիցների մասին հնարավոր առավել ստույգ կլինի կանխատեսումներ անել հավաքից մի քանի օր առաջ՝ սպասվող հանրային արձագանքներից ելնելով,
5. Հավաքին նախատեսվում է օգտագործել շարժական բեմահարթակ, բարձրախոսներ, Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության պետական դրոշներ, հնարավոր են պաստառներ, զոհված զինծառայողների նկարներ և այլն,
6. Հավաքում կարգադրիչների մասնակցություն չի նախատեսվում,
7. Հավաքի ավարտից հետո նախատեսվում է երթ՝ Հանրապետության հրապարակից դեպի Եռաբլուր զինվորական Պանթեոն երթուղով: Երթը նախատեսվում է մեկնարկել 2023 թվականի հունվարի 28-ին ժամը 15:00-ին (կամ այլ ժամի՝ կախված հանրահավաքի ավարտի հետ): Երթը կարող է անցնել Հանրապետության հրապարակ –

Վազգեն Սարգսյանի փողոց (Մարիոթ հյուրանոցի հատվածից) – Երևանի քաղաքապետարանի դիմացի հատվածով – Հաղթանակ կամուրջով – Ծովակալ Իսակովի պողոտայով – Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի խաչմերուկ – Եռաբլուր Պանթեոնի Փառքի կամար – Եռաբլուր զինվորական Պանթեոն երթուղով: Եռաբլուրում հանրային այլ հավաք չի նախատեսվում: Երթի մասնակիցները կարող են այցելել Պանթեոնի տարածքում գտնվող հուշարձաններին և գերեզմաններին՝ ծաղիկներ, մոմեր խոնարհելու և հարգանքի տուրք մատուցելու նպատակով: Երթի տևողությունը, ժամանակային իմաստով, ներկա պահին հնարավոր չէ պլանավորել:

8. Հանրային հավաքի կազմակերպիչն ու ղեկավարն է հանդիսանում Հայաստանի Հազարապետության քաղաքացի Էդգար Ֆերդինանդի Ղազարյանը

Խնդրում ենք օպերատիվ կարգով, բջջայրս կապր կամ էլեկտրոնային փոստի միջոցով, տրամադրել տվյալներ Երևանի քաղաքապետարանի այն պաշտոնատար անձի մասին (անուն, ազգանուն, զբաղեցրած պաշտոն, բջջային և աշխատանքային հեռախոսահամարներ, էլեկտրոնայն փոսի հասցե), որի հետ հնարավոր կլինի հետագայում օպերատիվ կապ պահպանել՝ նաև «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի հոդված 14-ի 5-րդ կետով սահմանված դեպքերում:

Էդգար Ղազարյան
Հայաստանի Հանրապետության քաղաքացի